

ԿՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ(*)

(1843 — 1891)

•

ՊէՊԻ ԻՐԱՊԱՇՏՆԵՐԸ խուճար բարե-
րարող ու արեւմտահայ գրականու-
թեան մէջ սեռի մը վրայ տիրական
նշանակումներ իրագործող բացառիկ մարդ
մըն էր էտիրնէցի այս պարզուկ սոմարա-
կալը, որուն հողքը կէս դարով ծանրացած
ըլլալուն հակառակ, ճշմարիտ մագնիս մըն
է մեր արժէքներով մտահոգ ամէն աշխա-
տաւորի։ Օրինակ մը մեծութեան։ Խորհրդ-
դանի մը աշխատանքի։ Արձան մը ան-
սահման թշուառութեան։ Ու առակ մը ուր
միտքին ու հոգիին կշիռը ըլլար ինքզինքը
լարգարած։ Ոչ մուսաններ ունէր, ասոնց
դարպասը օսկեղօծելու, ոչ ալ պատրանք-
ներ, ասոնցմով ինքզինքը շուրջառելու։
Իր հանդէսները — աշխատարանները — ի-
րին պէս անկայուն, թշուառ։ Իր գիրքերը,
բալիւնները հարստացնելու սահմանուած,
բայց իրեն արժող՝ տունին հացը ու զաւ-
կներուն անբաւարար սնունդ սրպէսզի ի-
րենց ծիրումը երկարածգէ ազգային հի-
ւանդանոցի պատասպարաններուն մէջ։ Հան-
ձա՞ր։ Բացառիկ տաղա՞նդ։ Մեծ գրագէ՞տ։
Գործածեցէք որը որ կ'ընտրէք սա պիտակ-
ներէն իր անունին հետ։ Սխալ մը պիտի
լինէիք։ Ու լայնցուցէք ձեր սիրտը, մա-
նուանդ միտքը, ինծի հետ խոստովանելու
որ միայն Պարոնեան մը տուած ըլլալը բաւ
է արեւմտահայ գրականութիւնը ազատա-
գրելու, արձակելու իր մեղադրանքներուն
մեծագոյն մթերքէն։ Դրէք Նոսթրէմը (Ա-
լիւան) տասներկուերորդ դարուն։ Ըսել
կ'ուզեմ Շնորհալիի ոտանաւորները բերէք

տասներկուերորդ դարուն։ Բառեր միայն
կ'ըլլաք տեղափոխած։ Հայ ժողովուրդը կը
պակսի երկու գործողութեանց ալ ետին։
Բայց փոխադրեցէք Պարոնեանի գործը,
գարձեալ, տասներկուերորդ դարուն։ Ըսել
կ'ուզեմ Մագիստրոսի և Սարկաւազի ար-
ձակներուն տեղ դրէք իրաւ մարդու մը
ապրումները։ Այսօր, նման հրաշքի մը գի-
նով, դուք կ'ունենայիք մեր ժողովուրդը։
Յ. Պարոնեան, առանց գրագէտ մը ըլլա-
լու, արեւմտահայ գրականութեան բոլոր
քանքարաւոր մշակներուն հաւասար չափով
մը բարիքն է ըրած մեր ժողովուրդին։ —
բարիքը զայն, այդ ժողովուրդը, գեթ իր
հիմնական քանի մը երեսներուն վրայ, վրն-
նապէս սեւեռած ըլլալու։ Հիմա ձեզ կը
հրաւիրեմ որ փորձէք սա մտածումը ձեր
ուզած ունէ արեւմտահայ գրագէտի վառ-
տակին վրայ։ Պիտի զգաք տարազին մե-
ծափառ ճնշումը ձեր գնահատութիւնը հար-
ուածող։ Յուզիչ գեղեցկութիւն ու յուզիչ
արժանիք։ Ահա Յ. Պարոնեանը։

Իր պարզագոյն կերպարանքին տակ
այսպէս զրուած սեղան, Պարոնեան, նման
իր գլծէ մարդոց շատերուն, նոյն ատեն
հեղինակն է մէկէ աւելի հէքեաթներու ու-
րոնք հաւանաբար բան մը կ'արտայայտեն
գրողին ինչպէս իր ընթերցողներու մտա-
յնութեան։ Իր փառքէն անցնող մօտ երեք
քառորդ դարը գրական իրողութիւն մը ա-
ւելորդ անգամ մըն ալ կը յանձնէ մեր ու-
շագրութեան, — ըստ որուն՝ մենք կը քա-
ւենք մեր համբաւը գրեթէ միշտ, երբեմն
տգգունելով, երբեմն հիմնովին ուրացուե-
լով։ Չեմ կարծեր որ յիսուն տարի վերջը
սա օրերէն՝ Ալիշանի մը, Մամուրեանի մը,
Ծերենցի մը, Պէրպէրեանի մը, Թէրզեանի
մը փառքերը վերադառնան իրենց հասցե-
ներուն։ Բայց երուխանի մը համար, Թըլ-
կատինցիին համար վերափառք մը մտածելի
արդարութիւն մըն է։ Պարոնեան ութսու-
նական թուականներուն մեծատարած գե-
ղեցկութիւն մըն է, արեւմտահայ ողջմտու-
թեան առաքեալը, հայ ժողովուրդին պար-
զուկ առաքինութեանց գումարը։ Պարոն-
եան այդ թուականէն քառորդ դար վերջը
յիշատակ մըն է, նոր հեգնողներու աւելի
արդիական արդիւնքին ընդմէջէն գրեթէ
կորսնցուցած իր փայլը։ 1920ին արեւեա-

(*) Համապատասխան Ռ. Հատորը (Կրտսեր Ռո-
մանթիւն) — Թերզեան, Սէրբեան, Անէմեան, Պէր-
պէրեան — իւր ընծայիլէ ետք, այժմ մեր յար-
գին ընթերցողներուն կը ներկայացնենք հատ-
ուած մը **Պէպի Իրապաշտներ** հատորին ամենէն
յատկանշական անձին և մեր գրականութեան
հանձարեղ երգիծաբան Յակոբ Պարոնեանի մա-
սին, զոր տաղանդաւոր գրագէտ-քննադատ Յ.
Օշական բացառիկ գեղեցկութեամբ և հմտու-
թեամբ սեւեռած է իբրեւ Մոսկ. ԽՍԲ.

հայերը անոր արձանը կ'առաջարկեն որ բարձրացուի Երևանի ամենէն փայլուն մէկ հրապարակին, ոչ անշուշտ միայն Պոլսեցիները ծիծաղելի ընող մարդու մը յիշատակը կոթողելու նպատակով, այլև մասամբ մը հպատակ այն մտայնութեան որուն ետին մենք կը զգանք հանճարային ողբերգութիւնը կարգ մը մարդոց: Այսպէս է որ իմ մէջ կը թարմանան անհեթեթ վարկածներ: Ամբողջ արևմտահայ գրականութիւնը Պարոնեանին միայն վերածող արեւելահայ գաղատաւանը մէկն է անոնցմէ: Գողջ, արգահատապին զիջուած շնորհը 1910ի մարդոց, արևմտահայերէն, Պարոնեանը արժեւորելու... մէկ ուրիշը: Այս կեցուածքները մէկու մը դէմ որուն գործէն զրեթէ ոչինչ է մեռած այսօր, Հաւաքէրին հեղինակը կը տպաւորեն սակայն: Կանխահա՞մ է ուրեմն, համադրական ու վերջնական գնահատում մը Պարոնեանի գործէն: Նման հարցական մը զիս չի մատնէր տագնապի իր խումբէն ոչ մէկուն հետ: Որքան ալ կործանէք եղիան, կամ փռաբանէք, այդ մեծ հիւանդին անկարող էք բարիք կամ չարիք հայթայթելու: Մեզսեղնէ գործը: Որքան ալ ձեր հրացումը ոսկեղօծէք, չէք կրնար թարմացնել բանաստեղծ Ալիշանի մը եռամեծար փառքը: Մէջտեղն են Նաւաբ տաղարանները: Անմամանակ, սակայն, Պարոնեանի գործին վերջնական նկատառումը: Արեւելահայերը գործնական, արագ, չեն տնտնար սակայն: Պետհրատը հաւաքած է էտիրնէցի տոմարակալին ամբողջական գործը, ոչ անշուշտ միայն հրատարակչական մտահոգութիւններով, այլ լոբիեային խոտովանութեամբ մը անոր գործին հանդէպ: Արեւելահայերը այդ քայլով տուած կ'ըլլան անգրանիկ վաւերացումը հայ գրականութեան մեծ արժէքներէն մէկուն: Մի աճապարէք տպագրական ձեռնարկ մը գրական իրողութիւն մը իբրեւ գնահատել: Ոչ մէկ գինով անոնք պիտի յօժարէին Թէրզեանի մը, Պէրպէրեանի մը գործերը հաւաքել մէկ ծածփ տակ, այսքան կանուխ: Ու անցէք փաստէն անդին. արեւելահայերուն համար Պարոնեանի գործը այլևս շահուած, անվերածելի, ազդային հարստութիւն մըն է, ինչպէս, նոյն չափերով ու տարրեր նկատողութիւններով՝ ազգային այդ հարստութիւնն է

գարձեալ, այս անգամ արևմտահայերուն համար, Արուստեանցի գործը: Արևմտահայ երկրայանքը Պարոնեանը արժեւորելու թերեւս ծնունդ կ'առնէ անոր գրականութեան իսկ նկարագրէն: Պարոնեան մարդիբ ու բարքեր միայն տուած է: Եթէ այդ մարդերը իբրեւ անուն գոյութիւն չունին այսօր, բայց իբրեւ տիպար մերձաւոր իրաւութեամբ մը կը պատին մեր մէջ: Պարոնեանով սեւեռուած բարքերը սփռուքին մէջ դեռ ի գորու են որոշ համեմատութեամբ: Արուստեան գործերը ժամանակէն բացարձակ գերմանումով մը կը գտնեն իրենց փառքը, իմաստը: Ահա թէ ինչն է ինքզինքս չեմ զգար իրաւասու, Պարոնեանին հանդէպ գործադրելու վերլուծումը, այսինքն անոր չափերը, կշիռները, զոր առանց խցահաւորութեան, մեծ վստահութեամբ մը նոյնիսկ գործածելի Զարթօնքի Սերունդին, Ռեմանթիքներուն վրայ, զոր գործադրած եմ իրապաշտներուն, Արուստեանցիներուն համար ալ: Պատիկ լուսաբանութիւն մը թերեւս ընէ ձեզի մատչելի սա նկատողութեանց ծփուն կորիզը: Ռեմանթիքներուն, Զարթօնքի մարդոց գործէն գրականը (որով կը զատուին այդ գործին միւս հանգամանքները), մեծ չափով մը անձնական ընդգրկելի, առանձնանալի է այսօր, չըրջանին քայքայներուն, ախորժակներուն, գովեստին և ուրացումին ընդմէջէն: Ուրիշ խօսքով՝ այդ գործը կը մեայ հպատակ ամենէն առաջ հեղինակներուն հանգամանաւոր, պարագայական անձնաւորութեան: Ալիշան մը բանաստեղծ՝ իբրեւ գաղատու կրօնքի, ազգային պատմութեան ու քիչիկ մըն ալ... երազանքի: Պէշիկթաշլեան մը բանաստեղծ՝ իբրեւ գործիչ, թատերագիր, դաստիարակ, ճառախօս ու միշտ քիչիկ մըն ալ... անձնական եղբերակակ: Կը ճշդենք բաժինները ու կ'ըսենք մեր խօսքը: Այն պարագային ուր ինծի տրուէր հաստատել առնցքի անդինը, այսինքն ցեղային խորունկ ձայներէ արձագանգ մը որոնք չեն կրնար տեղաւորուիլ ծոցը մէկ երկու սերունդի հոգեկան փորձարկութեանց (Պետրոս Դուրեան, Ռաֆֆի, Մեծարեան, Տէրեան, Թէքէեան), վերլուծումը պիտի չըվախար այս վերջիններուն սիրոյն ինքզինքը կանխել: Պարոնեան կ'ապրի տակաւին. գիտէք թէ ինչ կը նշանակէ ասիկա:

վերլուծումը — գիտություն — ստեղծելն է կենսաբան թուղթի վրայ ու անցած կ'ըլլայ իր յառակնություններն անդին երբ կը փորձէ դարձնել կենսաբան որ անտարադելի է:

Եթէ ենթարկենք արեւմտահայ գրականությունը ժամանակի կշիռին, Պարոնեանի գործը մեզի կը ներկայացնէ հասկանալի միջին մը ընդմէջ երկու յիսուններու (1850—1950): Այս իրողութեան թելադրանքը: — Ան' որ անիկա կուգայ գրական ծանր երկունքի մը սկզբնական մղումէն, կը վկայէ մեր զարթոյթին (առ է առնունքը գրական այդ երկունքին) համայնական ձգտումներէն, շատ աւելի հանգամանաւոր ձեռք մը, քանի որ նուաճում է գրեթէ օրը օրին, առանց գրականութիւն մը ծանրաբեռնող թեթեւ յառակնութեանց մեղքերուն, այդ զարթոյթը կերպարանող մարդոց շքախումբին վրայ պայծառ լոյսով մը որ ո՛չ վեհեակը ո՛չ ալ Բարեկը հասէ, եթէ կը ներէք փոխարեւորութիւնը, այլ ըլլար միջին մը, այդ մարդոց թերութեանց ինչպէս պերճ արժանիքներուն, զանոնք: այս անգամ գործերը ինչպէս մարդերը երկարաձգելով մեր լրջագոյն շարժումին (Բուպպես Եւրոպայի) ընդմէջէն, հասնելու համար մեր դարուն կէսերը մինչև, պաշտօն տեղ, փոշիանալու տեղ ամբանալով, պահելով իր ներքին հուրը, միշտ մեր ժողովուրդին միջին առաքինութիւններով պարտուն: Այս տողերը կ'իշխան թուղթին Պարոնեանի փառքին բովանդակ պայծառութեանը մէջ երբ մէկ կողմէն մեր նոր դոյզ գրականութեանց մէջ ո՛չ ոք՝ որ մեծածախ ծաղրին. ու ո՛չ մէկ արամադրութիւն՝ մեր անցեալը օտնակոխելու, գէթ գրական այդ սեռին ճամբաներով: Փոքր՝ այդ փառքը ստեղծելու, արեւմտահայոց մէջ կը խորհրդալի վերադառնէ, թերեւ այն պարզուկ փաստով որ ժամանակը իր կրօնադարեան կշիռը չէ խնայած անոր ներքին constitutionին: Մեռելէն կ'իշխան ամենէն առաջ զարդը, ներկը, փոշին: Այսօր Դիլիգր Արժուէնի մը չափերի անշուշտ, բայց Պարոնեանի Արժուէնի աւելի իրաւ է քան Մշակի տէր և անօրէն գործիչը: Ու հարկ կ'ա՛յ մեծ տարազներ գործածելու որպէսզի բացատրուի այս հրաշքը որ ուրիշ բան չէ եթէ ոչ առեւտր ինքնին: 1870ին,

Յաւանքներու և Նաւահանքներու կոթողային փառքի շրջաններուն որո՞ւ միտքէն կ'անցնէր որ եռամեծ քերթողը, պատմաբանը երեսուն տարի վերջը յարեւմտական հակա մը միայն պիտի գտնար, այսինքն փառքէ մը ազատելու, զայն մոռացման անգունը նետելու արարքին քառութեան նոխազ մը, 1940ին երջանիկ, երախտաւոր մեռել մը որմէ անունն իսկ հազիւ կը յիշուի: Ասիկա ոչ հրաշք է սակայն, ոչ ալ հրէշութիւն: Աշխարհի փառքերուն, ինչպէս գրականքներուն մէկ է ճակատագիրը: Պարտեցէք զիւրանները գովեստներուն որոնք մարտկոց (pile) կազմեցին ժիւ. դարու մեծ բանաստեղծներուն անձն ու գործը զիւցազներգող (տառներուն զիւմեցէք մանաւանդ) ու ըսէք թէ քանի՞ քերթում է կ'ազատի աննցմէ: Մեռնք, 1910ին, Օտեանի Փշտանքին իր ըստեղծած խանդավառութեան շուքով պահ մը թուեցաւ թէ կը գերազանցէր Աշտանքի Զօրքէ շարքին կշիռը: Այսօր: Անհոտոր, գրելու արարքին հանդէպ պատրանքէ գերծ, զէպքերու միայն սպասարկու ու բարքերու փառքին համար խենթ իմ սերունդը կը վերադառնայ իր սխալէն, գրեթէ մոռնալու համար զազազալուն շնորհները Օտեանի հեղեղութեան, բառական միջոցներով ու ժողովուն, համով արամադրութեան մը միայն սնանդ: Ի վերջոյ Մշակէն հայ գիւղ մը չէր իր օրին որպէսզի, այսօր, այդ շնորհներուն ցնդումէն վերջը (գրական գործերն ալ մարդկային ունին ճակատագիր ու ... ազումամազը՝ երկտասարդութեան որուն գիրն է դարձնալ թափիլ, երբեք մահէն առաջ) գրականութեան պատմիչ մը փորձէր զայն արժանորէ յետնագոյն զիւցազնութիւն մը ընելով հոն փրկուած բարքի մթերքին: Մշակէն Տէր Դաւիթ կուգայ անշուշտ Պոլիսէն: Բայց ո՞ր Պոլիսէն: Այսօր արտօնուած ենք այդ հարցումը զնելու, Օտեանին բուր գործին համար ալ ուր քմայքը (ինք իւր գործին համար ալ ուր քմայքը (ինք պիտի ըսէր Ֆանթիզին) կը մնայ տիրական ազգակ ու երգեծանքը՝ չօրրորդական միջոց մը այդ քմայքը համեղելու: Դիտեցէք Օտեանին գիրքերը վրայէ վրայ: Հոն ձեր Օտեանին գիրքին քանակը չի բաւեր լեցը գտնելիք բարքին քանակը չի համար՝ Պարոնէն Պարոնէն, օրինակի մը համար՝ Պարոնէն Պարոնէն: Մի ըսէք թէ հեղեղութիւնը և բարքերու մթերքը տարբեր իրողութիւններ են: Կ'ըսեմ որ գրողի մը ամենէն վա-

դանցուկ արժանիքը իր գրեկու շնորհն է։ Հեզնող է մը ամենէն շուտ հինցող մասը՝ իր նեղամեծ իսկ։ Երկու քէն ալ ազատուողը՝ ուզենք չուզենք փնտռելու, ընդունելու ենք մնայունին բաժինին մէջ որ բարքերով է պայմանաւոր ամէն բանէ առաջ։ Կ'ուրանք նար-Պէյի քերթողական վաստակը, միակտուր գրեթէ, բայց չենք կըրնար վերագոյն մէջնէն (իր բնական կառույց) չօգտագործել, չըջանի բարքերէն իր փրկած փոքր մասերովը։ Կ'ուրանք Տիւսարի վէպը ամբողջութեամբ, այդ բարքերէն իր հիմնական անմասնութեանը պատճառաւ։ Կը վարանինք նեղել Աշխէն ժողովրդէ վէպը, հոն գնուած բարքի մթերքին սիրոյն, որ կը քաւէ գիրքին կէսը լեցնող գրական անտիքը։ Հիմա, այս նկատողութիւններէն վերջ որոնք հանգամանորէն պիտի բացուին, վերլուծուին իրենց տեղերը, ձեռք կը հրաւիրեմ միակտուր մտապատկերել Պարոնեանի գործը։ Ես իմ կարգիս ըրած եմ առիկա ու կը խոստովանեմ թէ պատկառաղին զմայլանքէ մը տարբեր ապրում է հիմ ունեցած այն չքեղ կառույցին զիմաց որ հայ բարեբաւ մթերքն է Պարոնեանի վաստակին մէջ։ Արեւմտահայ գրականութիւնը իրապէս պիտի ըլլար մեծ գեղեցկութիւն եթէ երբեք անոր բոլոր մշակները նոյն մտահոգութեամբ թափէին իրենց քրտինքը։ Միջին մեր գրականութիւնը պիտի ստանար, այսօր, մեր աչքերուն, բոլորովին տարբեր պատկեր մը։ Մեր վէպը պիտի ըլլար մեր իրաւ ժողովուրդը, և ոչ թէ հատուածական նմոյշներու հանդէս մը այդ ժողովուրդէն։

Ու կ'ըսեմ, ինծի յատուկ աննկար պարզութեամբ մը. — Արեւմտահայ գրականութեան մէջ որ — լաւ հասկցէք առիկա, միանգամ ընդ միշտ — ոչ լուսին է ոչ ալ ժանկակ կամ բառակոյտ, այլ իմ ժողովուրդին ապրումներուն աւազանը. ոչ մէկ գրագէտի վիճակուած է սանկ կէս դարու կեանք մը լիակատար համադրած ըլլալու բախտը, ու ձգելու մեղի անվերածելի ինչպէս ամենաթանկ տախտակները մեր բարքերուն, ճշգրտութեամբ մը, փայլով մը, կարկառով մը, նոյնիսկ խորհրդանշանական տարողութեամբ մը, որոնք անցած են ահա փորձի չըջան, զիմացած՝ ճաշակին վերիվարութիւններուն ու գտած — կը հաւատամ —

իրենց վերջնական հանգստարանը, պատուանդանը, երբ նկատի կ'առնեմ Սփիւռքը, որ ուրիշ ժողովուրդ մըն է գրեթէ, ըսել կ'ուզեմ՝ Պարոնեանով փրկուածէն թեթեանդարձութեանով։ Այնպէս որ Պարոնեանի գիրքերը ազգային թանգարանին ամենէն կենդանի, վաւերագրական փաստքեր կը կազմեն։

Ոչ միայն երեք լման սերունդ, այլև մանաւանդ մեր գրական ճաշակներուն զըլխովին անհաղորդ, չըսելու համար հակադիր, հակոտնեայ ուրիշ զանգուած մը (Արեւելահայերը) Պարոնեանի մէջ կ'ողջունէ արեւմտահայ գրականութեան, ճիւղի մը վրայ, ու դուք գիտէք թէ որն է առիկա, անհասարկելի վարպետը։ Ամէն սերունդ երկար տատանութիւններու ընդմէջէն կ'արժեւորէ իր նախասիրութիւնները, անշուշտ որոշ չափով մը ապրելով զինքը կանխողներուն ամենէն միայուն արժէքները։ Պարոնեանի փառքը (չեմ գրեր վերափառք, վասնզի իր խաւարումը եղաւ չափազանց թեթեւ ու շատ շուտ գտաւ վերջ) Սփիւռքի գնահատման հիմ զիջիր սակայն։ Ինչպէս որ Հալէպի, Պէյրութի, Պաղեստինի, Ֆրանսայի և Ամերիկայի քաւարանին մէջ անոնք որ զեռ չեն մոռցած խաչ մը հանել ու կը գրեն իրենց անունները մեր գիրքերով, բայց շատ հեռու որ գիտեն միայն կը կրեն այն չքեղ ու սրտառու բանէն որ այդ մարդերուն պապերն էին Մշոյ դաշտին, Եփրատի փունքներուն, Բարձր Հայքի լեռնանիւտ ամբարտակներուն ներքը (Սրուանձտեանցի գործին մէջ այնքան անուշիկ ձևով մը զգալի), այնպէս ալ ինչ որ Պոլիս կը միայն այսօր 1860ի չքեղ ու սրտառու մարդոց արևնէն, այդպէս այլապէս, այլապէս, անճանաչելի բնութիւն աստիճան պարպուած իրենց ցեղէն (այդ մարդիկը ոչ միայն կը տառապին, կ'ամէնան իրենց հայութենէն, այլ առիկա ուրանալու, հալածելու արարքներուն մէջ կը պարզեն թուրք իսկ աղչեցնող, զըղուեցնող մոլեռանդութիւն մը) — այսինքն մեր սփիւռքը, ամբողջ ու համապատիւ — զիս չի մասններ շփոթանքի։ Մենք կ'անցնինք։ Բայց փառք Պարոնեանին, վասնզի ան է որ փրկած է այդ մարդերուն պապերը, զանոնք մասնաւորող, տեսակաւորող հոգեբանութիւնը ուրիշ ունէ մէկէ մը

ՊԱՏՄԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՊ ԱՐԺԱԿՈՒՆԻ

առիկ հաւատարմութեամբ սեւեռելով: Պապին ամենէն իրաւ արտայայտութիւնն է անկաւ: Միակ այս ծառայութեան գինով անկա իրաւունքն ունի իմ ամենախոր յարգանքին, հիացումին: Կրնայ պատահիլ որ ժամանակը յաղթահարէ արեւմտահայ գրականութեան ամենէն բարձրահայեաց փառքերը, ամենէն բարձրագիր արժէքները, վարկերը, համբաւները: Իմ կարճ կեանքս որքան շատ տեսաւ այս բարձրակասոյց նշաններուն գետնի հաւասարումը: Ատոր համար է որ, շատ մը օրինակներու մէջէն, լիմ զարմանար Սիւրմանթոն ընդոտնող ուրացումին — ես ապրեր եմ այդ բանաստեղծին փառքը իր լման պերճութեանը մէջ — ու մատնուեր խոռովքի: Պարոնեանին ուրուականը չի տառապիր դարձեալ տառապանքը Աւետիս Ահարոնեանին խաւարման: Փոխուած չէ, սա տողերուն զբոսած պահուն, մեր ճակատագիրը: Այսօր ալ մեր տղաքը կը մեծնան զրկանքին, աւտիւթեան, հոգեղէն սպանդին զարհուրանքին մէջ: Փոխուած են սակայն այդ աւտիւթը դիմաւորելու մեր եղանակները: Ու ինչ դժբախտութիւն որ ասոնցմէ մէկն ըլլալ այն արժեքը կուտ որ կարգախօս է դարձեր: Սփիւռքի աջ թեւը՝ իր կուռքերուն: Զախը՝ իր կիրքերուն: Արեւմտահայ գրականութիւնը՝ ամայաստան: Այս complexներուն ընդմէջէն է որ սփիւռքի տղաքը կոնակ կը դարձնեն այն ամէն պատկերներուն, գործերուն, ձայներուն որոնց ներսը մեր գերութեան, ցաւին մէկ արձագանգը կը կարծենք վերագալ: Զեմ զարներ հաւարին շեփորը: Մեզի կը սպառնան իրենց ընկիւններովը: Թող զան բարի այդ ընկիւնները: Բայց թող մնան զգոյշ անարգելէ հոկայ փառքը արեւմտահայ իրաւ գրագէտներուն: Երկու պոռնիկի պատմութիւն, չորս կտոր սրամիտ, լաւ դարձուած հայ հոյութիւն ու քաջքշուք չեն կրնար զիրենք իրենց աչքին մեծցնել: Պարոնեան իր կեանքովը վճարած է փրկանքը մեր գրականութեան, իր գործով՝ պարտքը չըրջանային ճաշակներուն, նորոյթին քմահաճոյքներուն: Անիկա գտած է իր յիշատակարանային գեղեցկութիւնը: Արեւելահայերուն պիտի իյնար փառքը զինքը իր պանթէնը առաջնորդելու:

Յ. ՕՇԱԿԱՆ

Իր մեծ հօր Խոսրովի օրով նախարարական ազգամիջեան կոիւնները, յետոյ իր հօր Տիրանին կողմէ նախարարներու հետգհետէ շեշտուող ապստամբական ելոյթները զոպելու և Արչակունի գահին գերիշխան հեղինակութիւնը պարտադրելու համար ձեռք առած բռնի և յաճախ արիւնալի միջոցները, ստեղծեր էին կացութիւն մը՝ որ խանգարած էր պետական ներքին կարգ ու սարքը, և տեսակ մը անիշխանութիւն յառաջ բերած: Այսպէս, զոր օրինակ, այն նախարարները որոնց վստահուեր էին կառավարական և զինուորական պաշտօններ, ինչպէս բանակի հրամանատարութիւն կամ երկրի հազարապետութիւն (այժմեան առումով համազօր ներքին գործոց նախարարութեան), կամ պաշտօնագուրկ եղած էին, կամ իրենք սրբողելով ձգած հեռացած:

Յիշենք, որպէս օրինակ, Մամիկոնեաններու պարագան: Երեք եղբայրներն ալ Տիրան թագաւորի հետ բախում ունեցած ըլլալուն, իրենց պաշտօններէն հրաժարելով հեռացած էին արքունիքէն և մեկուսի կը բնակէին հեռաւոր Տայքի մէջ⁽³⁰⁾:

Այս մէկ պարագան, միւսներէն առիկ երիտասարդ Արչակ թագաւորին ցաւ առթած ըլլալու էր: Քանզի ան, որպէս երեւխայ կամ մանուկ, իր հօր կողմէ յանձնուած էր Վասակ Մամիկոնեանին կրթութեան և զինավարժութեան համար: Վասակ, քէնուտած Տիրանէն, մանուկ Արչակը թագաւորին յանձնելով՝ հեռացած էր արքունիքէն:

Ներքին խաղաղութիւնը վերահաստատել անմիջական անհրաժեշտութիւն էր:

Նախարարական գահերու աստիճանները — միշտ այնքան կազ ու կուռի պատրաստի պատրուակ — Արչակ վերահաստատեց ըստ նախկին թագաւորներու օրով հաստատուած կարգին: (Բայց կ'երեւի նախանձաւար իշխաններ այս կարգը կը յարգէին՝ միշտ խառնակելով զայն: Որովհետեւ կը տեսնենք

(30) Փաւստոս, Գ. 18: